ՎԴ/3428/05/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/3428/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մարտի 29-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառելու վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 2-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետին, 11-րդ հոդվածի 1-ին կետին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Տվյալ դեպքում հայցվորը, դիմելով ՀՀ վարչական դատարան, խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանը ներառելու վարչական ակտը: Այսինքն՝ վեճը վերաբերում է գնումների գործընթացի հետ կապված հարաբերություններին, իսկ այդ հարաբերությունները՝ վերոգրյալ իրավակարգավորումների ուժով, վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են քաղաքացիաիրավական*

հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, հետևաբար Դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ և 6-րդ կետերին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին կետին, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, նույն օրենքի հավելվածի 17-րդ կետին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 734-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ, 39-րդ կետերին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 1-ին մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ գնման մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ֆինանսների նախարարության գործառույթը հանդիսանում է օրենքով պետական կառավարման մարմնին վերապահված հանրային իշխանական լիազորություն, որի շրջանակներում Ֆինանսների նախարարությունը և գնման մասնակիցը չեն կարող գնահատվել կողմերի իրավաբանական հավասարության և կամքի ինքնավարության սկզբունքների վրա հիմնված իրավահարաբերության կողմեր, քանի որ նշված իրավահարաբերության շրջանակներում ֆինանսների նախարարությունն իրացնում է օրենքով իրեն վերապահված հանրային իշխանական լիազորությունը, որն իր հերթին հանդիսանում է վերջինիս համար*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 155-161:

պարտականություն, որի առնչությամբ չի կարող դրսևորվել կամքի ինքնավարություն, այսինքն՝ առկա է Վճռաբեկ դատարանի կողմից նախանշված պայմաններից ևս մեկը՝ արտացոլված հետևյալ հարցադրմամբ՝ արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:

Անդրադառնալով Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմանն առ այն, որ գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, հարկ է նշել, որ տվյալ իրավահարա-բերությունների շրջանակներում առանձին գործառույթների իրականացումը վարչական եղանակով չի հակասում նշված նորմի տրամաբանությանը, քանի որ վարչական ակտերը ևս կարող են ուղղված լինել քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը և դադարմանը:

(…)

Սույն դեպքում վիճարկվում է հանրային իրավահարաբերության տիրույթում գտնվող որոշում՝ վարչական ակտ (սույն փուլում էական չէ, առկա է արդյո՞ք վարչական ակտը, թե՝ ոչ, էական է դրա վիճարկման պահանջ ներկայացված լինելը, որն իր հերթին հանդիսանում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայց), որն ըստ Հայցվորի գնահատման, իր համար առաջացրել է կոնկրետ բացասական փաստական հետևանքներ:

Սույն դեպքում էական նշանակություն ունի նաև հետևյալ հարցադրումը՝ արդյո՞ք քաղաքացիական դատարանն օժտված է «վարչական ակտն անվավեր ճանաչելու» պահանջի քննության իրավասությամբ, որն ամբողջությամբ համընկնում է ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված

վիճարկման հայցի բովանդակությանը՝ հիմք ընդունելով հայցի առարկան որոշելու և պնդելու՝ հայցվորի տնօրինչականությունը»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3428/05/24 գործն ըստ «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառելու վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 176-179:

Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք

բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պայմանառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

10. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել գնումների գործընթացի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված գնումների հետ կապված վեճերով գործերը քննվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *«Դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գնումների հետ կապված վեճերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը»:*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները»:*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 13-րդ և 23-րդ կետերի համաձայն՝ *«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.* ***գնում՝*** *պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը.* ***լիազորված մարմին՝*** *պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին,* ***գնման գործընթաց՝*** *գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և*

պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ *«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող*

քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կայացման հնարավորությունը չի վերացել: (…)»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:*

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաառրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»:*

12. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են, ինչպես նաև այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Հարկ է նշել, որ գնման գործընթացը՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և

պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, որում ներառվում են գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումն ու կառավարումը:

Տվյալ դեպքում օրենսդիրը գնումների հետ կապված վեճերով գործերի քննության համար նախատեսել է ենթակայության և ընդդատության որոշակի կանոններ: Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված գնումների հետ կապված վեճերով գործերը ենթակա են քննության բացառիկ տարածքային ընդդատության կարգով՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում: Ընդ որում, այդ գործերից միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերի քննությունն է նախատեսված հատուկ հայցային վարույթի կարգով:

Միևնույն ժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը չի բացառել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում նաև գնումների հետ կապված այլ վեճերով գործերի քննությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով* մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Բացի այդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է, որ *գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ*: Նման օրենսդրության

բաղկացուցիչ մաս է կազմում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:

Վերոգրյալից հետևում է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը քննվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ հայցային վարույթի կարգով, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների հետ կապված այլ վեճերով գործերը ենթակա են քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ընդհանուր հայցային վարույթի կարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով օրենսդիրը կարգավորել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետ կապված հարաբերությունները, որոնք իրենցից ենթադրում են գնման գործընթացի իրականացմանն ուղղված որոշակի գործողությունների կատարում:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդրի նպատակն ուղղված է եղել գնումների հետ կապված հարաբերությունները որպես քաղաքացիաիրավական դիտարկելուն: Այդպիսի հարաբերություններ են նաև մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետ կապված հարաբերությունները, որոնք նույնպես դիտարկվում են որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների բաղկացուցիչ մաս:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մարտի 29-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառելու վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին[3],

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորը, դիմելով ՀՀ վարչական դատարան, խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանը ներառելու վարչական ակտը: Այսինքն՝ վեճը վերաբերում է գնումների գործընթացի հետ կապված հարաբերություններին, իսկ այդ հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, հետևաբար ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ սույն դեպքում վիճարկվում է հանրային իրավահարաբերության տիրույթում գտնվող որոշում՝ վարչական ակտ (սույն փուլում էական չէ, առկա է արդյո՞ք վարչական ակտը, թե՝ ոչ, էական է դրա վիճարկման պահանջ ներկայացված լինելը, որն իր հերթին հանդիսանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայց), որն ըստ Հայցվորի գնահատման, իր համար առաջացրել է կոնկրետ բացասական փաստական հետևանքներ[5]:

14. Գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության և լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջև ծագած վեճը ՀՀ ֆինանսների

[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

նախարարության կողմից պատվիրատուի կայացրած որոշման հիման վրա մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ է, այսինքն՝ գնումների հետ կապված այնպիսի իրավահարաբերությունների, որպիսիք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վարչական իրավահարաբերություններ չեն, և կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի այն դիրքորոշմանը, որ սույն դեպքում ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածին համապատասխան վիճարկման հայց, իսկ վեճի առարկա իրավական ակտի վարչական ակտ հանդիսանալու փաստն էական չէ, ապա հարկ է նշել, որ վիճարկման հայցի առարկան անձի՝ իր համար միջամտող կամ այդպիսի դրույթներ պարունակող (զուգորդվող) վարչական ակտն է, իսկ վարչական ակտի էական հատկանիշներից մեկը հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու հատկանիշն է: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների գործընթացի շուրջ ծագող հարաբերություններն իրենց բնույթով մասնավոր հարաբերությունն են, ուստի դրանց շուրջ ծագող վեճը, անկախ ներկայացված հայցի առարկայի ձևակերպումից, ենթակա է ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

15. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3428/05/24 գործն ըստ «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառելու վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3428/05/24 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/3428/05/24 գործն ըստ «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի մարտի 5-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԼՈԿԱՏՈՐ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառելու վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ